Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ
Armenian Territorial Development Fund

N 15/01/120-22 «21» 01 2022թ.

«Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ի տնօրեն
պարոն Վ. Բաղդասարյանին

Հարգելի պարոն Բաղդասարյան

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (այսուհետ՝ հիմնադրամ) **«Մ-Բի-Ռ»** ՍՊԸ-ի (այսուհետ՝ ընկերություն) հետ 2019 թվականի օգոստոսի 28-ին կնքել է «Ավտոմեքենաների վերանորոգման» ծառայությունների մատուցման պետական գնման **ՊՊԾԳՀ-ԾՁԲ-2019/4** պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի **1.2.** կետով նախատեսվել է Պայմանագրի **Հավելված N1/Տեխնիկական բնութագիր-ժամանակացույցին** համապատասխան և սահմանված ժամկետներում ծառայությունների մատուցում՝ կապված հիմնադրամի ավտոմեքենաների ընթացիկ վերանորոգման հետ:

Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետների պահպանման և հատկապես սպասարկման որակի բարելավման վերաբերյալ գրությամբ հիմնադրամը դիմել է ընկերությանը 2021 թվականի դեկտեմբերի 22-ին: 2021 թվականի դեկտեմբերի 24-ին ստացվել է պատասխան գրություն, որով ընկերությունը պարտավորվել է հնարավորին սեղմ ժամկետներում վերացնել թերությունները: Սակայն, **ս.թ. հունվարի 14-ին, հունվարի 18-ին և հունվարի 19-ին** հիմնադրամի աշխատակիցների կողմից կատարված այցելությունների ընթացքում Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման վայրում սպասարկող անձնակազմ չի եղել, ավելին՝ տեխնիկական սպասարկման կայանը փակ է եղել: Փաստացի, ընկերության կողմից Պայմանագրով ստանձնած և 24.12.2021թ-ի գրությամբ վերահաստատված պարտականությունները չեն կատարվում:

Հաշվի առնելով նկարագրվածը և ղեկավարվելով Պայմանագրի **2.1.3** կետի **(ա)** ենթակետի դրույթներով, որոնք սահմանվում են, որ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե մատուցված ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի **Հավելված N1-ով** սահմանված պահանջներին, որոնք մասնավորապես նախատեսում են, որ *վերանորոգման ներկայացված մեքենան դիագնոստիկ զննման պետք է ենթարկվի ներկայացման օրը և մեկօրյա ժամկետում Պատվիրատուին պետք է հայտնվի տեղեկատվություն վերանորոգման մասին, իսկ ծառայությունները պետք է մատուցվեն տրանսպորտային միջոցը տեխսպասարկման կայանում գրանցելու օրվանից առնվազն մեկից- հինգ օրացուցային օրվա ընթացքում*, կայացվել է որոշում՝ համարել պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման **ՊՊԾԳՀ-ԾՁԲ-2019/4** Պայմանագիրը լուծված:

Սույնով տեղեկացնում ենք Ձեզ նաև, որ ղեկավարվելով Ձեր կողմից ներկայացված Տուժանքի մասին համաձայնագրի 1.4 կետի դրույթներով, **ՊՊԾԳՀ-ԾՁԲ-2019/4** Պայմանագիրը ոչ պատշաճ

կատարելու համար ՀՏՋՀ-ն մտադիր է պահանջ ներկայացնել «Ակբա- Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ին՝ **1,224,000** ՀՀ դրամ գումար ստանալու վերաբերյալ:

Հարգանքով՝

Գործադիր տնօրեն 21/01/2022 **Ա. Սողոմոնյան**

X

ԱՐԹՈՒՐ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Signed by: SOGHOMONYAN ARTUR 1205720065

Կատարող՝ Ա. Իսախանյան
Հեռ. (010) 24 71 23/106